Հավելված N 1
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
«08» ապրիլ 2024 թ.
N 483-Ա/2 հրամանի

Կ Ա Ր Գ

ԱՐՇԱՎԱԽՈՒՄԲ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ՓՈԽՀԱՏՈՒՑԵԼՈՒ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ, ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԿԱՄ ՀՈՒՇԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ՆՊԱՍՏԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՀԱՄԱՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետությունում գիտական և գիտատեխնիկական գործունեություն իրականացնող պետական կազմակերպություններում և բարձրագույն ուսումնական հաստատություններում (այսուհետ՝ Կազմակերպություն) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ իրականացվող գիտական ծրագրերում (այսուհետ՝ Ծրագիր) ընդգրկված գիտաշխատողի ղեկավարությամբ արշավախումբ կազմակերպելու, Ծրագրում ընդգրկված գիտաշխատողի գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու, ինչպես նաև գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում և միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղման համար ֆինանսական միջոցներ տրամադրելու հետ կապված հարաբերությունները:

2. Դաշտային հնագիտական գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար ֆինանսական միջոցներ տրամադրվում են հնագիտական տարածքը տեղազննելու, հետախուզելու կամ պեղելու նպատակով արշավախումբ կազմակերպելու համար:

3. Կազմակերպության ղեկավարը, արշավախմբի՝ դաշտային աշխատանքների մեկնելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ, պաշտոնական գրությամբ դիմում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե)՝ գրությանը կից ներկայացնելով.

1) հնագիտական տարածքներում գիտահետազոտական աշխատանքներ կատարելու համար սահմանված կարգով տրված թույլտվությունը (բաց թերթիկ, այլ),

2) դաշտային պայմաններում հնագիտական գիտահետազոտական աշխատանքներ կատարելու՝ հաստատված ծրագիրը.

ա. արշավախմբի անվանումը/թեման,

բ. բնակավայրը/երթուղին,

գ. աշխատանքների.

- նպատակներն ու խնդիրները,
- բնույթն ու ցանկը,
- իրականացման ժամկետները,

3) արշավախմբի ղեկավարի տվյալները.

ա. ազգանուն, անուն, հայրանուն,

բ. ծննդյան ամսաթիվ (*օօ/աա/ԹԹԹԹ*),

գ. զբաղեցրած պաշտոն,

դ. գիտական աստիճան, կոչում,

ե. բջջային հեռախոսահամար,

զ. էլեկտրոնային փոստի հասցե,

է. https://grants.hesc.am համակարգում նույնականացման անհատական կոդ,

4) ծախսերի նախահաշիվը,

5) արշավախմբի մասնակիցների ցուցակը:

4. Գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցներ տրամադրվում են Ծրագրին առնչվող միջազգային գիտաժողովին, գիտական կոնֆերանսին, սիմպոզիումին կամ սեմինարին (այսուհետ՝ Գիտական միջոցառում), գիտաշխատողի, որպես կանոն, բանավոր զեկույցով հանդես գալու համար (որպես կանոն՝ տարեկան մեկ անգամ):

5. Կազմակերպության ղեկավարը, գիտաշխատողի գիտական գործուղման մեկնելու օրվանից առնվազն երեսուն օր առաջ, պաշտոնական գրությամբ դիմում է Կոմիտե՝ գրությանը կից ներկայացնելով.

1) գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու հայտը (այսուհետ՝ Հայտ),

2) Գիտական միջոցառման կազմակերպիչի հրավերը կամ գործուղվող գիտաշխատողի զեկույցն ընդունելու մասին ծանուցումը:

6. Արշավախումբ կազմակերպելու, գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին Կազմակերպություններից ստացված գրություններն ու Հայտերը քննարկելու նպատակով ստեղծվում է աշխատանքային խումբ:

7. Աշխատանքային խումբը գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով, ըստ անհրաժեշտության:

8. Աշխատանքային խումբն առաջին նիստում հաստատում է Հայտի գնահատման թերթիկի ձևը:

9. Արշավախումբ կազմակերպելու մասին Կազմակերպության գրությունն աշխատանքային խմբում քննարկվում է հրավիրված փորձագետ(ներ)ի մասնակցությամբ:

10. Աշխատանքային խումբը տալիս է արշավախումբ կազմակերպելու, գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու նպատակահարմարության վերաբերյալ եզրակացություն, որի հիման վրա կայացված Կոմիտեի որոշման մասին գրավոր տեղեկացվում է Կազմակերպության ղեկավարը:

11. Արշավախումբ կազմակերպելու նպատակահարմարության վերաբերյալ դրական եզրակացության դեպքում Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է Արշավախումբ կազմակերպելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին պայմանագիր:

12. Գիտական գործուղման ծախսերը փոխհատուցելու նպատակահարմարության վերաբերյալ դրական եզրակացության դեպքում Կազմակերպությունը կազմակերպում է տոմսի գնման գործընթացը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգի: Տոմսի գնման գործընթացին առնչվող փաստաթղթերի պատճենները Կոմիտե ներկայացնելուց հետո, Կոմիտեի և Կազմակերպության միջև կնքվում է Գիտական գործուղման ճանապարհածախսը փոխհատուցելու համար ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին պայմանագիր:

13. Արշավախմբի աշխատանքներն ավարտվելուց հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպության ղեկավարը պաշտոնական գրությամբ Կոմիտե է ներկայացնում սահմանված կարգով ընդունված դաշտային աշխատանքների գիտական հաշվետվության պատճենը՝ կցելով Կոմիտեի կողմից տրամադրված ֆինանսական միջոցներով իրականացված ծախսերը հաստատող փաստաթղթերի պատճենները:

14. Գիտաշխատողի գիտական գործուղման ավարտից հետո տասն աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպության ղեկավարը պաշտոնական գրությամբ Կոմիտե է ներկայացնում գործուղման արդյունքների մասին գիտաշխատողի՝ Կազմակերպություն ներկայացրած հաշվետվության պատճենը՝ կցելով ուղևորի նստեցման կտրոնների (boarding pass) պատճենները:

15. Գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում և միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղման համար ֆինանսական միջոցներ տրամադրելու հիմք է հանդիսանում գործուղման մասին ընդունված իրավական ակտը կամ կազմակերպիչի պաշտոնական հրավերը:

16. Գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում և միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղման մասին իրավական ակտն ընդունվելուց կամ կազմակերպիչի պաշտոնական հրավերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում Կոմիտեի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնին տրվում է ֆինանսական միջոցներ տրամադրելու մասին հանձնարարական, որտեղ նշվում է գործուղման համար անհրաժեշտ գումարի (ճանապարհածախս, մասնակցության վճար, օրապահիկ, գիշերավարձ, այլ) չափը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշման համաձայն:

17. Գիտության ոլորտում գործող միջազգային պայմանագրերի, համաձայնագրերի կամ հուշագրերի շրջանակներում և միջազգային համագործակցության զարգացմանը նպաստելու նպատակով գործուղման ավարտից հետո, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացվում է հաշվետվություն: